ԳԼՈՒԽ ԺԵ.

ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ *)

Հայաստանի Հանրապետութեան նախապատմութիւնը վերջացնելու համար անհրաժեշտ է կանգ առնել և Բագուի դէպքերի վրա, որոնք թէև Հայաստանի հետ անմիջական առընչութեան մէջ չէին գտնուում, բայց ահագին նշանակութիւն ունեցան նրա ճակատագրի համար. առանց Բագուի Հայաստանի դէպքերը կարող էին բոլորովին այլ ընթացք ստանալ:

Թիֆլիսի Հ. Ազգ. Խորհրդի օրինակով, 1917թ. վերջերը, Բագուում էլ կազմուեց Ազգային Խորհուրդ, որի մէջ մտան Աբր. Գիւլխանդանեան, Վարդան, Կ. Պարունակեան (դաշնակցականներ), Լևոն Աթաբէգեան (սոց.-յեղ.), Նար. Տէր-Ղազարեան (ս.-դ.), Հայկ Տէր-Միքայէլեան և Ս. Տէր Ղազարեան (ժողովրդականներ): Առաջին նիստում, դեկտ. 30-ին, նախագահ ընտրուեց Ա. Գիւլխանդանեանը, փոխ-նախագահ՝ Լ. Աթաբէգեանը: Ազգ. Խորհրդին, ձայնի իրաւունքով, մասնակցում էին նաև Ռոստոմը, Յ. Քաջազնունին և բժ. Խաչանեանը: Ազգ. Խորհուրդը գործադիր մարմին էր, որ ենթարկուում էր Ազգ. Ժողովին՝ բաղկացած կուսակցութիւնների 32 ներկայացուցիչներից: Յետագային, Անդրկասպեան երկիրը մեկնած Կ. Պարունակեանի տեղ անցաւ Մ. Արարատեանը, իսկ Լ. Աթաբէգեանին փոխարինեց Յ. Տէր-Օհանեանը և, իբրև փոխ-նախագահ, յաջորդեց Ն. Տէր-Ղազարեանը: Լ. Աթաբէգեանը Ազգ. Խորհրդի աշխատանքներին շարունակեց մասնակցել որպէս հրաւիրուած անդամ: Արևմտահայերի կողմից Ազգ. Խորհրդի նիստերին, փոփոխակի, ներկայ էին լինում Ռ. Քաջբերունին և Զ. Եսայեանը: 1918թ. սեպտեմբերին Ազգ. Խորհրդի մէջ մտան և առաջնորդ Բագրատեպ.-ը, Ստ. Թաղիանոսեանը, Ա. Վաչեանը և Աբր. Դաստակեանը:

Ազգային Խորհուրդներ ունէին և Բագուի միւս ժողովուրդները — մահմեդականները, ռուսները, վրացիները և այլն, որոնք բոլորն էլ, սկզբի շրջանում, կատարում էին սահմանափակ դեր. իրական իշխանութիւնը պետական հիմնարկութիւնների և բանուորական խորհրդի մէջ էր, ուր տիրող ոյժը սոցիալիստ-յեղափոխականներն էին:

---

*) Այս գլուխը կազմելիս օգտուել եմ Աբր. Գիւլխանդանեանի «Բագուի Հերոսամարտ»-ը փաստերով ու վաւերագրերով հարուստ աշխատութիւնից, որը, դժբախտաբար, դեռ մնում է չհրատարակուած: Այդի առաջ եմ ունեցել և զօր. Գ. Ղորղանեանի ծանօթ գիրքը, ինչպէս նաև մի շարք անտիպ նիւթեր ու վաւերագրեր: